Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 ապրիլ 2024 թվական

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ռադիոդետալների ձեռքբերման նպատակով 2024 թվականի փետրվարի 14-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լևոն Մնդլյան» ԱՁ-ն: Փաստաթղթերի գնահատման արդյունքում «Լևոն Մնդլյան» ԱՁ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նրան առաջարկվել է կնքել ռադիոդետալների մատակարարման պայմանագիր: «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, սակայն «Լևոն Մնդլյան» ԱՁ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում այդպես էլ չի ներկայացրել իր կողմից հաստատվող որակավորման և պայմանագրի ապահովումները: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը «Լևոն Մնդլյան» ԱՁ-ն զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Լևոն Մնդլյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Լևոն Մնդլյան» ԱՁ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**